ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

«Բնագիտություն», «Մաթեմատիկա», «Տեխնոլոգիա», «Ես և շրջակա աշխարհը» առարկաների մեթոդական միավորման նիստի

Նիստը կայացել է 2026 թվականի օգոստոսի 25-ին: Մասնակցողների թիվը՝ 9:
Մասնակցողների անուն, ազգանուն՝

1. Անգին Սահակյան
2. Ալինա Թորոյան
3. Անահիտ Անդրեասյան
4. Կարեն Գիժլարյան
5. Ամալյա Խուբլարյան
6. Սուսան Գորգինյան
7. Մարինե Պողոսյան
8. Անուշ Խաչատրյան
9. Տատյանա Սարգսյան

Խորհրդակցական ձայնի իրավունքով, նիստին ներկա է եղել նաև տնօրենի տեղակալ Լ. Մանվելյանը և ԿԱԴԱՀ՝ Հ.Մինասյանը:

Օրակարգում՝

1. Մեթոդական միավորման նիստի օրակարգի հաստատում (զեկուցող՝ ՄՄ ղեկավար Ա. Սահակյան):
2. Մեթոդական միավորման քարտուղարի ընտրության հարցը (զեկուցող՝ ՄՄ ղեկավար Ա. Սահակյան):
3. «2026–2027 ուսումնական տարվա աշխատանքները կանոնակարգող իրավական ակտերում կատարված փոփոխությունների ներկայացում» (զեկուցող՝ տնօրենի տեղակալ Լ. Մանվելյան):
4. Դասալսումների քանակի և դասալսումների արձանագրությունների ձևաչափի մշակման հարցը (զեկուցող՝ տնօրենի տեղակալ կամ ՄՄ ղեկավար):
5. Ուսումնական պլանով սահմանված դասաժամերի նախնական բաշխման և տնօրենի հաստատմանը ներկայացման վերաբերյալ առաջարկության ձևավորման հարցը (զեկուցող՝ ՄՄ ղեկավար Ա. Սահակյան):
6. ՄՄ անդամ ուսուցիչների կողմից դասի պլանի կազմման և ներկայացման միասնական ձևաչափի հարցը (զեկուցող՝ ՄՄ ղեկավար Ա. Սահակյան, ՄՄ անդամներ):
7. ՄՄ անդամ ուսուցիչների կողմից գնահատման ձևերի, ինչպես նաև ամփոփիչ գնահատման՝ միավորային կամ բնութագրող գնահատման մեթոդների և հաճախականության ընտրության քննարկման և մանկավարժական խորհրդի հաստատմանը ներկայացնելու հարցը (զեկուցող՝ ՄՄ ղեկավար Ա. Սահակյան, ՄՄ անդամներ):
8. ՄՄ անդամ ուսուցիչների կողմից առաջարկված ուսումնական նախագծերի թեմաների քննարկման հարցը (զեկուցող՝ ՄՄ ղեկավար Ա. Սահակյան, ՄՄ անդամներ):

Լսեցին՝

1. Մեթոդական միավորման ղեկավար Ա. Սահակյանը ներկայացրեց մեթոդական միավորման հերթական նիստի օրակարգի նախագիծը՝ ներկայացնելով ընդգրկված հարցերը, զեկուցողներին և քննարկման հիմնական ուղղությունները: Նշվեց, որ օրակարգը կազմվել է՝ հիմք ընդունելով մեթոդական միավորման տարեկան աշխատանքային պլանը, ուսումնական գործընթացի կազմակերպման առաջնահերթությունները և ընթացիկ աշխատանքային խնդիրները:

Լսեցին՝

2. Տնօրենի տեղակալ Լ. Մանվելյան ներկայացրեց որ ՄՄ ղեկավարումը տնօրենի կողմից հանձնարարվել է ՄՄ անդամ ուսուցիչներից Անգին Սահակյանին և ներկայացրեց ՄՄ քարտուղարի

ընտրության անհրաժեշտությունը՝ նշելով, որ քարտուղարը պատասխանատու է մեթոդական միավորման նիստերի արձանագրությունների վարման, դրանց պատշաճ ձևակերպման և պահպանման համար: Ներկայացվեցին ՄՄ քարտուղարի հիմնական գործառույթներն ու պարտականությունները:

ՄՄ քարտուղարի թեկնածու առաջադրվեց Ա. Օհանյանի թեկնածությունը: Քննարկվեցին թեկնածուի կազմակերպչական կարողությունները և նշված գործառույթներն իրականացնելու պատրաստակամությունը:

Թեկնածության վերաբերյալ անցկացվեց բաց քվեարկություն: Քվեարկության արդյունքում Ա. Խուբլարյանի թեկնածությանը կողմ քվեարկեց 9 անդամ, դեմ՝ 0 անդամ:

Լսեցին՝

3. Տնօրենի տեղակալ Լ. Մանվելյանը մեթոդական միավորման անդամներին ներկայացրեց 2026–2027 ուսումնական տարվա աշխատանքների կազմակերպումը կարգավորող իրավական ակտերում կատարված հիմնական փոփոխությունները՝ առանձնացնելով դրանց գործնական կիրառման առանձնահատկությունները: Քննարկման շրջանակում անդրադարձ կատարվեց հանրակրթության պետական չափորոշչին, ուսումնական ծրագրերին, գնահատման գործընթացին, ինչպես նաև ուսուցիչների իրավունքները, պարտականություններն ու պատասխանատվությունը սահմանող համապատասխան իրավական դրույթներին:

Ներկայացված կարգավորումների կիրառման վերաբերյալ տրվեցին անհրաժեշտ պարզաբանումներ, ինչպես նաև պատասխաններ մասնակիցների կողմից բարձրացված հարցերին: Ընդգծվեց, որ իրավական պահանջների միասնական ընկալումն ու գործնականում դրանց պատշաճ կիրառումն ապահովելու համար կարևոր է ուսուցիչների շարունակական իրազեկումը և համապատասխան իրավական ու մեթոդական նյութերի հասանելիության ապահովումը՝ ներառյալ իրավական դաշտում կատարվող փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվությունը:

Լսեցին՝

4. Մեթոդական միավորման ղեկավար Ա. Սահակյանը անդրադարձավ ուսումնական տարվա ընթացքում դասալսումների կազմակերպման հարցին՝ ներկայացնելով դրանց իրականացման պարբերականության, կարգի և արձանագրման միասնական ձևաչափի վերաբերյալ առաջարկությունները: Կարևորվեց դասալսումների նպատակների և կազմակերպման հստակեցումը, ինչպես նաև յուրաքանչյուր ուսուցչի համար նախատեսվող նվազագույն քանակի սահմանումը՝ գործընթացի նպատակային և արդյունավետ իրականացումն ապահովելու համար:

Քննարկման ընթացքում անդրադարձ կատարվեց դասալսումների ժամանակ դիտարկվող հիմնական չափանիշներին, արդյունքների ամփոփման և ուսուցիչներին հետադարձ կապի տրամադրման մոտեցումներին: Մասնակիցներին ներկայացվեց դասալսումների արձանագրությունների միասնական ձևաչափը, որի վերաբերյալ հնչե

Լսեցին՝

5. Մեթոդական միավորման ղեկավար Ա. Սահակյանը ներկայացրեց ուսումնական պլանով նախատեսված դասաժամերի նախնական բաշխման վերաբերյալ մշակված նախագիծը: Ներկայացման ընթացքում ընդգծվեց, որ դասաժամերի բաշխման ժամանակ անհրաժեշտ է նկատի ունենալ առարկայական ծրագրերով սահմանված պահանջները, ուսումնական գործընթացի կազմակերպման առանձնահատկությունները, ուսուցչական առկա ներուժը և դասարանների համակազմը:

Քննարկման ընթացքում ուսումնասիրվեցին առարկաներին հատկացված դասաժամերի քանակը, դրանց համապատասխանությունը ուսումնական ծրագրերին, ինչպես նաև ուսուցիչների դասաբեռնվածության և մասնագիտական ռեսուրսների հետ կապված հարցերը: Հաշվի առնելով քննարկման արդյունքները՝ ներկայացվեցին դասաժամերի առավել արդյունավետ բաշխման վերաբերյալ առաջարկություններ, որոնց հիման վրա ձևավորվեց մեթոդական միավորման առաջարկությունը ըստ ստորև ներկայացված աղյուսակի.

N	Անուն, ազգանուն	Առարկան	Դասարան	Ժամերի քանակ	Ընդամեն
1	Անգին Սահակյան	Բնագիտություն	5 Բ, 5Գ, 8Ա, 8Բ, 8Գ	20	20
2	Ալինա Թորոյան	Ես և շրջակա աշխարհը	6Ա, 6Բ, 6Գ, 7Ա, 7Բ, 7Գ, 8Ա, 8Բ, 9Ա	20	20
3	Անահիտ Անդրեասյան	Մաթեմատիկա	6Գ, 7Ա, 7Բ, 7Գ, 9Ա	25	29
		Բնագիտություն	5Ա	4	
4	Կարեն Գիժլարյան	Մաթեմատիկա	5Գ, 8Ա, 8Բ, 8Գ	20	20
5	Ամալյա Խուբլարյան	Տեխնոլոգիա	7Ա, 5 Բ, 5Գ, 8Ա, 8Բ, 8Գ, 9Ա	23	23
6	Սուսան Գորգինյան	Բնագիտություն	7Ա, 7Բ, 7Գ	12	12
7	Մարինե Պողոսյան	Տեխնոլոգիա	5Ա, 7Բ, 7Գ	16	27
		Բնագիտություն	6Ա, 6Բ, 6Գ, 9Ա	11	
8	Անուշ Խաչատրյան	Մաթեմատիկա	4Դ, 5Ա, 5Բ, 6Ա, 6Բ	24	28
		Ես և շրջակա աշխարհ	5 Բ, 5Գ	4	
9	Տատյանա Սարգսյան	Տեխնոլոգիա	6Ա, 6Բ, 6Գ	12	12

Լսեցին՝

6. Մեթոդական միավորման ղեկավար Ա. Սահակյանը ներկայացրեց դասի պլանների կազմման և ներկայացման միասնական ձևաչափի վերաբերյալ ՄՄ անդամների առաջարկը՝ ընդգծելով, որ միասնական մոտեցման կիրառումը կնպաստի դասերի նպատակային պլանավորմանը, ակնկալվող կրթական վերջնարդյունքների ապահովմանը և ուսումնական գործընթացի համակարգված կազմակերպմանը:

Քննարկման ընթացքում հստակեցվեցին դասի պլանում պարտադիր արտացոլման ենթակա հիմնական բաղադրիչները: Մասնավորապես, անդրադարձ կատարվեց դասի նպատակների, ակնկալվող վերջնարդյունքների, ուսուցման մեթոդների և նախատեսվող գործունեությունների, գնահատման ձևերի, ինչպես նաև տնային առաջադրանքի ներառմանը:

ՄՄ անդամները քննարկեցին նաև պլանների ներկայացման ժամկետները, միասնական ձևաչափի կիրառման և պատրաստված պլանների պահպանման հետ կապված կազմակերպական հարցերը: Հնչած առաջարկությունների հիման վրա մշակվեց դասի պլանի ներկայացման միասնական ձևաչափի նախագիծ:

Լսեցին՝

7. Մեթոդական միավորման ղեկավար Ա. Սահակյանը ներկայացրեց գնահատման ձևերի, ինչպես նաև ամփոփիչ գնահատման մեթոդների և կիրառման հաճախականության վերաբերյալ ՄՄ անդամ ուսուցիչների առաջարկությունները: Նշվեց, որ դրանց ընտրության հիմքում պետք է լինի գնահատման գործընթացի արդյունավետ, օբյեկտիվ և հանրակրթության պետական չափորոշչի պահանջներին համապատասխան կազմակերպումը:

Քննարկման ընթացքում ուսուցիչները ներկայացրին իրենց դասավանդած առարկաների և դասարանների համար նախատեսվող գնահատման ձևերն ու մեթոդները: Անդրադարձ կատարվեց ամփոփիչ գնահատման նպատակներին, դրա կիրառման առանձնահատկություններին, ինչպես նաև տարբեր գնահատման ձևերի նպատակահարմարությանը՝ հաշվի առնելով առարկաների և դասարանների առանձնահատկությունները:

Առանձին քննարկվեց միավորային և բնութագրող գնահատման կիրառման հարցը, ինչպես նաև ամփոփիչ գնահատման իրականացման պարբերականությունը: Քննարկման արդյունքներով համաձայնեցվեցին գնահատման գործընթացի կազմակերպման միասնական մոտեցումները և ամփոփիչ գնահատման առաջարկվող ձևերի, մեթոդների ու հաճախականության վերաբերյալ ՄՄ առաջարկությունները:

Լսեցին՝

8. Մեթոդական միավորման ղեկավար Ա. Սահակյանը ներկայացրեց ՄՄ անդամ ուսուցիչների կողմից առաջարկված ուսումնական նախագծերի թեմաները՝ անդրադառնալով դրանց ընտրության առանձնահատկություններին: Նշվեց, որ դպրոցի սովորողների կրթական առանձնահատկություններով պայմանավորված՝ թեմաների ինքնուրույն ընտրության ընդհանուր մոտեցումն այս դեպքում կիրառելի չէ: Թեմաների ընտրության հիմքում անհրաժեշտ է դիտարկել ոչ միայն առարկայական ծրագրերի և հանրակրթության պետական չափորոշչի պահանջները, այլև սովորողների կրթական կարիքները, զարգացման և գործունեության առանձնահատկությունները, կարողությունները, հետաքրքրություններն ու նախասիրությունները:

ՄՄ անդամ ուսուցիչները ներկայացրին իրենց առաջարկած նախագծերի թեմաները, որոնց վերաբերյալ քննարկվեցին նախագծերի նպատակները, ակնկալվող վերջնարդյունքները, իրականացման հնարավորությունները, ինչպես նաև դրանց կրթական, դաստիարակչական և գործնական նշանակությունը: Առանձին անդրադարձ կատարվեց առաջարկվող թեմաների՝ հանրակրթության պետական չափորոշչի և առարկայական ծրագրերի պահանջներին համապատասխանությանը, ինչպես նաև սովորողների առանձնահատկություններին և հնարավորություններին:

Քննարկման և վերլուծության արդյունքում ներկայացվեցին թեմաների հստակեցման, առանձին թեմաների միավորման և անհրաժեշտության դեպքում լրամշակման վերաբերյալ առաջարկություններ: Արդյունքում առանձնացվեցին այն թեմաները, որոնք առավել համապատասխան են սովորողների կրթական առանձնահատկություններին և հնարավորություններին և միաժամանակ հնարավորություն են տալիս ապահովելու առարկայական ծրագրերով ու չափորոշչով սահմանված ուսումնառության նպատակների իրագործումը:

Ամփոփելով քննարկումը՝ ՄՄ ղեկավար Ա. Սահակյանը ներկայացրեց ՄՄ անդամների կողմից առաջարկված և քննարկման արդյունքում ընտրված ուսումնական նախագծերի թեմաների վերջնական ցանկը՝ նշելով, որ հաջորդ փուլում անհրաժեշտ է սկսել համապատասխան

ՀՀ	Ուսուցչի անուն, ազգանուն	Դասարան	Նախագծի անվանումը
1	Սուսան Գորգինյան	7^{բ} (1-ին կիսամյակ)	Աշուն
2	Անգին Սահակյան	8^{ա} (1-ին կիսամյակ)	Երկնային մարմիններ
3	Ամալյա Խուբլարյան	8^{գ} (1-ին կիսամյակ)	Հարթապատկերային զարդաքանդակ
4	Թորոյան Ալինա	7^{ա} (2-րդ կիսամյակ)	Բույսեր: Ծառեր, թփեր, խոտաբույսեր
5	Պողոսյան Մարինե	7^{գ} (2-րդ կիսամյակ)	Հայկական ազգային ուտեստներ
6	Գիժլարյան Կարեն	8^{բ} (2-րդ կիսամյակ)	Կշեռք, կշեռքի տեսակներ
7	Անդրեասյան Անահիտ	9^{ա} (2-րդ կիսամյակ)	Չափումներ դրանց նշանակությունը

Լսելով 2026 թվականի օգոստոսի 27-ի նիստի օրակարգային հարցերի վերաբերյալ զեկուցումները և քննարկելով ներկայացված հարցերը՝ մեթոդական միավորումը

Որոշում է

1. Հաստատել մեթոդական միավորման նիստի օրակարգը՝ բաղկացած 8 հարցից: Նիստի աշխատանքներն իրականացնել հաստատված օրակարգին համապատասխան՝ ապահովելով օրակարգային հարցերի քննարկումն ու ընդունված որոշումների իրականացումը սահմանված ժամկետներում: Որոշումների կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել մեթոդական միավորման ղեկավարին:

2. Մեթոդական միավորման քարտուղար ընտրել Ա. Խուբլայանին: Հանձնարարել քարտուղարին մեթոդական միավորման նիստերի արձանագրությունները կազմել և էլեկտրոնային եղանակով ներկայացնել նիստի անցկացումից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում:

3. Ի գիտություն ընդունել 2026–2027 ուսումնական տարվա աշխատանքները կանոնակարգող ներկայացված իրավական փաստաթղթերը և դրանցում կատարված փոփոխությունները: Ուսումնական գործընթացը կազմակերպել գործող իրավական ակտերի պահանջներին համապատասխան: Անհրաժեշտության դեպքում կազմակերպել լրացուցիչ խորհրդատվություններ և իրազեկումներ:

4. 2026–2027 ուսումնական տարում իրականացնել դասալսումներ՝ հետևյալ տրամաբանությամբ.
   - **4.1.** Մեթոդական միավորման ղեկավարի կողմից՝ յուրաքանչյուր ուսուցչի մոտ յուրաքանչյուր կիսամյակի ընթացքում առնվազն 1 դասալսում,
   - **4.2.** ՄՄ անդամ ուսուցիչների կողմից՝ յուրաքանչյուր ուսուցչի կողմից յուրաքանչյուր կիսամյակի ընթացքում առնվազն 1 դասալսում:
   - **4.3.** Դասալսումների արձանագրման ձևաչափի վերաբերյալ առաջարկությունները ներկայացնել մանկավարժական խորհրդի քննարկմանը՝ միասնական մոտեցում ապահովելու համար:

5. Հավանություն տալ ուսումնական պլանով սահմանված դասաժամերի նախնական բաշխմանը՝ համաձայն ներկայացված աղյուսակի: Մեթոդական միավորման առաջարկությունը նախնական դասաբաշխման վերաբերյալ ներկայացնել առաջիկա ՄԽ նիստին:

6. Հավանություն տալ դասի պլանի կազմման և ներկայացման միասնական ձևաչափին: Մշակված ձևաչափի օրինակը ներկայացնել մանկավարժական խորհրդի նիստում քննարկման:

7. Մանկավարժական խորհրդի հաստատմանը ներկայացնել ՄՄ անդամ ուսուցիչների կողմից ընտրված ամփոփիչ գնահատման ձևերը, մեթոդներն ու իրականացման հաճախականությունը՝ դրանց կիրառման ընթացքում հաշվի առնելով սովորողների կրթական առանձնահատկությունները, կարողություններն ու կարիքները:

8. Հիմք ընդունելով ՄՄ ղեկավարի զեկույցը և ղեկավարվելով ԿԳՄՍ նախարարի 2025 թվականի մարտի 25-ի N 09-Լ հրամանի 2-րդ գլխի 8-րդ կետով՝ հավանություն տալ ՄՄ անդամ ուսուցիչների կողմից ներկայացված ուսումնական նախագծերի թեմաներին՝ հաշվի առնելով դրանց համապատասխանությունը հանրակրթության պետական չափորոշչի և առարկայական ծրագրերի պահանջներին, ինչպես նաև սովորողների կրթական առանձնահատկություններին, կարողություններին, հետաքրքրություններին և նախասիրություններին:

9. Նախագծային աշխատանքների պատասխանատու ՄՄ անդամներին հանձնարարել սկսել 2026–2027 ուսումնական տարվա առաջին կիսամյակում նախատեսված ուսումնական նախագծերի պլանների մշակման աշխատանքները և մշակված պլանները ներկայացնել սեպտեմբերի առաջին շաբաթվա ընթացքում նախատեսված ՄՄ նիստին:

Առարկայական մասնախմբի ղեկավար՝ _____ **Ա. Սահակյան**

Քարտուղար՝ _____ **Ա. Խուբլարյան**

26.08.2026